

Բացի այս դէպքերէն, Ռուսաստանը տիրական կերպով կ'երեւնայ թրքական սահմաններու վրայ: Սակայն այս քաղաքական փոթորիկի շրջանին, պատմական այս նշանաւոր զարձակէտին առջեւ, հայերն ու քիւրտերը քաղաքական հասունութիւն չունէին մէկ ճակատի վրայ դասաւորելու իրենց ուժերը:

Պատմական դէպքերը, երբ առարկայօրէն քով քովի կը բերենք, իրաւացիօրէն ցաւ կը զգանք, որ քիւրտերու եւ հայերու ազատագրական շարժումը, այսօր, մէկ զար ուշացած է: Յունաստանի ազատագրութեան ժամանակաշրջանը, — Թուրքիոյ թէ ներքին եւ թէ արտաքին դժուարութիւնները նկատի առնելով —, հայերու եւ քիւրտերու ազատագրութեան ճիշդ թուականն էր: 1805-էն մինչեւ 1840-ական թուականները, երբ նկատի կ'առնենք Թուրքիոյ ներքին փոփոխութիւնները, բարենորոգչական ձեռնարկները, ենթէջրիներու կոտորումը, Ռուսաստանի սպառնալից վայրէջքը, Եգիպտոսի Մէհմէտ Ալի փաշայի եւ յետոյ իր սղայի իրբահիմ փաշայի պատերազմները եւ Թուրքիոյ կատարեալ պարտութիւնը (Իրբահիմ փաշան զբաւած էր Սիւրիան, Կիլիկիան ու հասած՝ մինչեւ Գոնիա) . զարմանալի, բայց ամենէն աւելի ցաւալի է տեսնել քիւրտ իշխանապետութիւններու անտարբերութիւնը նման առիթէ մը օգտուելու, կամ միանալու հայերու հետ՝ միանգամ ընդմիշտ ազատուելու օսմանեան լուծէն:

Թողունք այս խորհրդածութիւնները եւ դառնանք պատմական դէպքերուն, ուր աւելի ակնյայտնի պիտի երեւնայ քիւրտերու եւ թուրքերու հակամարտութիւնը եւ հայոց բռնած դիրքը:

1800-էն մինչեւ 1860-ական թուականները, Թուրքիա բոլորեց ներքին փոթորիկի շրջան մը, որուն վրայ պէտք է աւելցնել արտաքին ծանր պատերազմները: Այդ ժամանակաշրջանը Թուրքիոյ ամենէն տկար ու անկազմակերպ շրջանը կարելի է համարել: Հայաստանի, Քիւրտիստանի եւ Արաբիոյ մէջ Թուրքիոյ անուանական դերիշխանութիւնը միայն գոյութիւն ունէր: Ու Թուրքիա իրեն սպառնացող բազմաթիւ վտանգներէն զբոսած՝ մեծազանգուած բանակներ (բազմահազար բա-

շիպօզուֆներու ընկերակցութեամբ) շարժման մէջ կը դնէր, ասիական բարբարոս միջոցներով ընկճելու զանազան ազգութիւններու պատկանող ուժեղ կորիզները եւ կ'ուզէր իրական տէրը դառնալ այդ ընդարձակ հողամասերուն, որոնք, հակառակ երկար տարիներու տիրապետութեան չէին թրքացած եւ իրեն համար ամուր կոռուան մը չէին:

Միւս կողմէ, 19-րդ դարու առաջին յիսնամեակը ազգային վերածնունդի սկզբնաւորութեան թուական մըն էր: Ազգային գիտակցութիւնը թէեւ տարտամ, բայց զարթումի նախանշաններ ցոյց կուտար Մերձաւոր Արեւելքի մէջ: Այսպէս, քիւրտ իշխանապետութիւնները, թէեւ անջատ անջատ, սակայն իսպա կորովի կերպով ընդդիմութեան դուրս եկան թրքական ոտնձգութիւններու դէմ: Սասունն ու Զէյթունը ապաստանեցան իրենց լեռնային առանձնութեան մէջ եւ ուղեցին պահպանել իրենց տեղական անկախութիւնը: Մնացեալ հայերը, ինչպէս վերը թուեցինք, աչքերը օտար միջամտութեան յառած՝ պետական կեանքի մէջ, իրենց խնդրագրերով՝ կառչած մնացին Թուրք կառավարութեան, քիւրտ աւատապետ փաշաներէն ազատուելու համար:

ՔՐՏԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ
19-ՐԴ ԴԱՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԿԷՍԻՆ
ԵՒ ՀԱՅԵՐՈՒ ՕՐԻԵՆԹԱՅԻԱՆ

Թուենք շարք մը պատմական դէպքեր, որոնք շատ անգամ իրարմէ անջատ, ու երբեմն ալ իրար հակասելով, տեղի ունեցան, եւ սակայն, միասին առած՝ ընդհանուր պատկերը կուտան 19-րդ դարու առաջին կէսին, քիւրտերու եւ հայերու ազատագրական շարժման աւրնչութեան:

1805-ին Քալանդար փաշայի գեկավարութեամբ թրքական բանակ մը քալեց Զէյթունի վրայ . միեւնոյն ժամանակ Ալբիստանի իսլամ ցեղախումբերը իրենց անկանոն ուժերով միացան օսմանեան կանոնաւոր զօրքերուն՝ ընկճելու Զէյթունի կէս անկախութիւնը: Բայց չկըրցան Զէյթուն մտնել, հանդիպելով հայերու զօրեղ դիմադրութեան: Ի դէպ, պէտք է ըսել, որ Զէյթունը այդ ատեն բաժնուած էր երկու անհաշտ մասերու, որոնք սակայն ընդհանուր վրտանդին դիմադրաւելու համար միացեալ ճա-